

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**

**2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ**

**ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ
ԾՐԱԳԻՐ**

Կազմել է՝ համայնքի ղեկավար ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ -----

Հաստատվել է՝ համայնքի ավագանու ---13.12.2016թ.---թիվ-17 որոշմամբ-
(Նիստի ամսաթիվը)

ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐ 2016թ.

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն


2.1 Համայնքի ընդհանուր նկարագրություն

Կաթնաղբյուր համայնքը գտնվում է ՀՀ Արագածոտնի մարզում, մարզկենտրոնից 42 կմ հարավ-արևմուտք, բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1650 մ և վարչական տարածքը կազմում է 2257,03 հա:

Ըստ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամարի Կաթնաղբյուրի մշտական բնակչությունը 2274 մարդ է, իսկ 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա բնակչությունը կազմում է 1161 մարդ, որից 1161՝ ազգությամբ հայ:

Բնակչությունը ըստ սեռա-տարիքային կազմի՝

- Մինչև 6 տարեկան----- 97 մարդ, որից՝ 48 իգական, 49 արական
- 6-ից մինչև 18 տարեկան----- 179 մարդ, որից՝ 75 իգական 104 արական
- 19-ից մինչև 63 տարեկան----- 717 մարդ, որից՝ 356 իգական, 361 արական
- 63 և ավելի տարիքի ----- 168 մարդ, որից՝ 99 իգական, 69 արական



Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, բանջարաբուծությամբ և այգեգործությամբ:

Համայնքն ունի 1- մանկապարտեզ, 1-մշակույթի տուն(գործում է մասնակի), և միջնակարգ դպրոց՝ որում սովորում են 149 աշակերտ: Դպրոցի աշխատակազմը՝ 39 աշխատակից, այդ թվում՝ 27 մանկավարժ:

Համայնքում վերջին տարիներին նկատվում է բնակչության աճ, որը կապված է ծնելիության մակարդակի բարձրացմամբ՝ մասնավորապես 2015 թվականին ծնունդների թիվը կազմում է 20 նորածին, իսկ 2016 թվականին՝ 13 նորածին:

2.2 Համայնքի սոցիլ տնտեսական իրավիճակը

Կաթնաղբյուր համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 45985,5 հազ դրամ:

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտները կազմում են 30781,9 հազ դրամ, կամ ընդհանուր տարեկան եկամուտների 19,6 %-ը:

Համայնքի տարածքում արդյունաբերական ձեռնարկություններ չկան:

Համայնքում գրանցված և գործում են թվով վեց տնտեսվարող սյուբեկտներ, որոնք իրականացնում են առևտրային գործունեություն՝ հիմնական առաջին սպառման առարկաների վաճառք:

Համայնքի բնակիչները հիմնական զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Մասնավորապես՝ ցորենի, գարու և առվույտի մշակությամբ: Ցորենի և գարու տարեկան միջին բերքատվությունը կազմում է 15-20ց:

Բանջար-բոստանային կուլտուրաների արտադրությամբ (լոբի, լոլիկ, վարունգ, սմբուկ, պղպեղ, սոխ, կարտոֆիլ):

Այգեգործությամբ՝ խնձոր, ընկույզ, ծիրան:

Համայնքում գործում է թանգարան, արձակագիր Մ.Գալշոյանի, այցելուների քանակը տարվա հաշվարկով 5000-ից ավելի է:

Համայնքում առկա է պատմա-մշակութային հուշարձան՝ հիմնադրված 4-5-րդ դար :

Համայնքն ունի 1-մանկապարտեզ (գործում է մեկ խումբ – 30 երեխա), 1-մշակույթի տուն(գործում է մասնակի) և միջնակարգ դպրոց նախատեսված 600 աշակերտի համար՝ որում սովորում են 149 աշակերտ:

Համայնքը ունի առողջապահական հիմնարկ՝ բուժ կետ: Համայնքապետարանի շենքի տարածքից համայնքապետի որոշմամբ 80 քմ հատկացվել է համայնքի բնակիչներին համապատասխան ծառայություն մատուցելու համար: Այցելուների թիվը տարվա ընթացքում կազմում է 3500-4000 մարդ:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքների թիվը 2016 թվականի համար կազմել է 75 ընտանիք

Գործազրկության մակարդակը կազմում է 50%:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

համայնքի-պետության համագործակցության շրջանակներում ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվում է գյուղ.տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը և գյուղատնտեսական տարբեր միջոցառումները,

հարևան համայնքների հետ համատեղ իրականացվում են միջհամայնքային ճանապարհների մաքրման պահպանման աշխատանքները,

միջազգային և դոնոր կազմակերպություններից համագործակցության շրջանակներում համայնքը ակնկալում է ոռոգման համակարգի վերանորոգում և բարելավվում, մանկապարտեզի և մշակույթի տան շենքերի վերանորոգում,

տեղացի բարերարների կողմից նախատեսվում է իրականացվող գյուղի սրբատեղի կառուցման ծրագիր (եկեղեցի),

համայնքի վարչական տարածքում մասնավոր անձանց և ընկերությունների կողմից նախատեսվում է ներդնել գյուղ արտադրանքի(կաթ, միս, բանջարեղեն և այլն) վերամշակման արտադրամասեր, ինչպես նաև տրիկոտաժի փոքր ձեռնարկություն, գորգագործարան, ծխախոտագործարան(առկա է համապատասխան և տարածք):

Պետության հետ համագործակցության շրջանակներում՝ ՀՀ ԳՆ կից ԾԻԳ-ի կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող գյուղ,տեխնիկայի ձեռքբերման ծրագրերը էականորեն դրական ազդեցություն կարող են ունենալ հողատարածքների արդյունավետ մշակման, որն էլ կարող է բերել անասնազլխաքանակի ավելացմանը:

- Արտաքին լուսավորվածություն՝ 10 կմ
- գազաֆիկացում՝ 16 կմ,
- ոռոգման համակարգի վերանորոգում՝ 11 կմ,
- դպրոցի շենքի հիմնանորոգում՝ 230,000 միլիոն դրամ,
- մանկապարտեզի շենքի նորոգում,
- մշակույթի տան ջեռուցում,կոյուղու նորոգում,նստարանների փոխում,
- ճանապարհների բարեկարգման ծրագիր:

2.5 Զարգացման խոչնդոտներ և դժվարություններ

Կաթնաղբյուր համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրներն են՝ ոռոգման համակարգը, աղբահանությունը, գիշերային լուսավորվածությունը, ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը, դաշտամիջյան ճանապարհների բարելավումը, գազաֆիկացումը, տուրիզմը, հակակարկտային կայանի բացակայություն:

Համայնքի առաջնահերթ խնդիրներից է համայնքը ամբողջովին գազաֆիկացնելը: Համայնքի ընդամենը 30 %-ն է գազաֆիկացված, գյուղացին օգտվում է հեղուկ գազից գազաբալոններից, որը սազդում է բնակչի սոցիալական վիճակի վրա:

Ոռոգման համակարգի նորոգումը, ինչպես նաև դաշտամիջյան ճանապարհների բարելավումը կնպաստի գյուղացու գյուղատնտեսական աշխատանքների հեշտացմանը, արդյունավետությանը: Չունենալով ոռոգման համակարգ, պայմանական ոռոգման ժամանակ առաջանում են ոռոգման ջրի մեծ կորուստներ, որը նվազեցնում է բերքատվությունը:

Համայնքի դժվարություններից է աղբահանության խնդիրը, չունենալով աղբահանման մեքենա՝ աղբահանությունը կատարվում է ոչ պարբերաբար, որը և ազդում է համայնքի բնապահպանության վրա:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Երևան-Գյումրի գլխավոր մայրուղուն, նախկին շրջկենտրոնին՝ Թալինին մոտ գտնվելը,
- միջհամայնքային ճանապարհներն, որոնք անցնում են համայնքի տարածքով՝ ասֆալտապատ լինելը,
- Էժան աշխատուժը,
- կրթական ցենտր ,
- հեռագնա արոտները:

Համայնքի թույլ կողմերն են՝

- Մարզկենտրոնից հեռու գտնվելը,
- Գազաֆիկացված չէ ամբողջ գյուղը (70%-ը)
- Ոռոգման ցանցի անմխիթար վիճակը
- Սպորտային հրապարակներ չունենալը
- Բնակլիմայական խիստ պայմանները

Հնարավորություններն են՝

- Կրթական բարձր մակարդակը՝ ունենք մեծ քանակությամբ ԲՈՒՀ ավարտած մասնագետների ներուժ

Սպառնալիքներն են՝

- Կարկտահարություն
- Ցրտահարություն
- Երաշտ
- Ոռոգման համակարգի ոչ բավարար վիճակ

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Կաթնաղբյուր համայնքում ՀՀԶԾ իրականացման արդյունքում հինգ տարիների ընթացքում տեղի է ունենալու հետևյալ փոփոխությունները.

Գազաֆիկացում – բնակչության կենսամակարդակի բարձրացում, կենցաղային պայմանների բարելավում և ընտանեական բյուջեի տնտեսում:

Ոռոգման համակարգի բարելավում – բերքատվության բարձրացում, սեփականաշնորհված հողերի մշակում, գյուղատնտեսական մթերքների և անասնազլխաքանակի աճ:

Համայնքային դաշտամիջյան ճանապարհների բարելավում.

Գյուղատնտեսական տեխնիկայի օգտավետ օգտագործման հնարավորությունները, գյուղատնտեսական աշխատանքների արդյունավետության բարձրացում:

Լուսավորվածություն – բնակչության շարժի մատչելիություն

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններ և զարգացման խթաներ են հանդիսանում դոնոր կազմակերպությունները, ՀՀ կառավարությունը և հիմնադրամները:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներ են համարվում

- Աղքատության շեմի նվազում՝ 20-30%
- Սեփական եկամուտների տարեկան աճ՝ 5-7%
- Ներգաղթ տարեկան՝ 3-5 %
- Ընտանեական բյուջեի տարեկան աճ՝ 7-10 %

4. ՀՀԶՄ ֆինանսավորում

ՀՀԶՄ – ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝
Համայնքի սեփական եկամուտներ՝ հողի հարկ և վարձավճար, գույքահարկ,
տեղական տուրքեր և վճարներ,
Ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ դոտացիա, այլ դոտացիաներ,
Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ տարբեր դոնոր
կազմակերպություններ և հիմնադրամներ,
Բարեգործություն/նվիրատվություն՝ ՎՕՍ (Վերջին Օրերի Սրբեր)

1. Համայնքի գույքի և դրամական միջոցների կառավարում ծագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 201650000 դրամ, այդ թվում 2017թվականի համար սահմանվել է 37850000 դրամ, որից 14634900 դրամ սեփական եկամուտների 23215400 դրամ ներքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Դրանից 22994300 դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 148561000 դրամը՝ կապիտալ ծախսերին: Ծախսը առկա է:

2. Նախադպրոցական և արտադպրոցական դաստիարակություն ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 15000000 դրամ, այդ թվում 2017 թվականի համար սահմանվել է 3000000 դրամ, որից 2000000 դրամը սեփական եկամուտների, իսկ 1000000 դրամը՝ ներքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: 3000000 դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին: Ծախսը առկա է:

3. Ակտիվ մշակույթային և մարզական կյանքի կազմակերպում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 17503600 դրամ, այդ թվում 2017թվականի համար սահմանվել է 3503600 դրամ, որից՝ 2000000 դրամը սեփական եկամուտների, իսկ 1503600 դրամը ներքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Դրանից 2803600 դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին, իսկ 700000 դրամը կապիտալ ծախսերին: Ծախսը առկա է:

4. Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 4800000 դրամ, այդ թվում 2017թվականի համար սահմանվել է 800000 դրամ, որից 500000 դրամը սեփական եկամուտների, իսկ 300000 դրամը՝ ներքին պաշտոնական դրամաշնորհների հաշվին: Դրանից 800000 դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին: Ծախսը առկա է:

5. Համայնքում բնակարանային շինարարության խթանում ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 169583800 դրամ , որից՝ 1000000 դրամը ուղղվելու է ընթացիկ ծախսերին , իսկ 500000 դրամը՝ կապիտալ ծախսերին: 2018-2019թվականներին նախատեսվում է 160000000 դրամ գազաֆիկացման համար: Ֆինանսավորման հարցը լուծված չէ: